



# ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՎՐԱ

## ՆԵՐԳԱՂԹՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՔՐԱՎԱՆԻ ԺԱՍՆՈՒՄԸ



ունիսի 27-ին, վաղ առավոտից, Բաթումիի նավահանգրատում արտակարգ կենդանութիւն էր տիրում:

Այդտեղ էին հավաքվել առաջին քարավանով Հայրենիք՝ Սովետական Հայաստան ժամանող արտասահմանյան հայերին դիմավորողները: Նրանք սպասում էին «Տրանսիլվանիա» մեծ ջերմանամի ժամանմանը, որը երեք օր առաջ Բելյուսթի նավահանգրատում իր վրա էր վերցրել 1806 ներգաղթող հայերի, մեծ մասամբ Բելյուսթի և Դամասկոսի նախկին բնակիչներ: Դիմավորողների թիվն հետզհետե աճում էր: Նրանք բոլորն էլ աշխույժ գրուցելով իրենց հայացքն ուղղել էին դեպի հեռուն, դեպի կապուտակ ծովի աշննդգրկելի հորիզոնը՝ սրտեղից պիտի երկար հսկա ջերմանամբ:

Ժամը 11-ին հորիզոնում վերջապես նկատվում է խոշոր շոգենամի ուրվագիծը, որը ծովի փրփուրաբաշ պլիքները ճեղքելով արագորեն առաջ էր շարժվում դեպի ափը: Հեռագիտակով գիտողներն արդեն պարզ տեսնում էին նավի վրա հպարտորեն ծածուկող դրոշմը: Տախտակամածի վրա երևում էր մարդկանց մեծ բազմություն. նրանք ձեռքները, գլխարկները, թաշկինակները օգտակար հարկերով հեռվից ողջունում էին տարիներով երազած սովետական հողը, որի վրա շուտով ոտք պետք է դնեին:

Ժամը 12-ն է ջերմանամբ բավականաչափ մոտեցել էր սովետական ափերին, այնպես որ առանց հեռագիտակի էլ կարելի էր ոչ իրայն դիտել, այլև կարող էր նավի անունը: Մի քանի րոպե ևս և նավի սրտահույզ սուրյունն ազդարարում է իր մոտեքը սովետական նավահանգիստը, որին հետևում է աղմուկով խարսխի նետումը: Այդ պահին նավից ու նավամատուցից ուժգին հնչում են ողջույնի և բարեգալուստի շոտող կանչերը: Հանկարծ

տախտակամածի վրայից հնչում է հանդիսավոր երգի հուժեղու ձայնը. իսկույն դադրում են կանչերը. տիրում է խորին լուսթյուն, բոլորը հանում են գլխարկները: Այդ տախտակամածի վրա կանոնավոր շարքերով դասավորված, հայրենիք դարձող երիտասարդությունն էր Սովետական երկրի դռների առաջ ուժգին հրգում Սովետական Միության հիմնը՝ հայերեն լեզվով: Տախտակամածի վրա էին բոլոր ուղևորները. նրանց գլխավերևը ծածանվող մեծ ալ դրոշի վրա, որ բարձր ու հպարտ պահում էին սովետական նոր առույգ աւ երջանիկ քաղաքացիները, կար մեծ առաջնորդ և հայ ժողովրդի ազատարար հարազատ Ստալինի պորտրեն՝ հետևյալ հուզիչ մակագրությամբ. «Շնորհակալություն մեր հայր Ստալինին»: Բոլոր հայրենադարձները հստակ գիտակցում էին, որ այդ օրվանից իրենց տարագիր կյանքին վերջակետ է դրվում և սկսվում է մի նոր, փասաշող պլանք, որի համար պարտական են Մեծ Առաջնորդին. ահա թե ինչու անհուն երախտագիտական զգացմունքով էին համակված սովետական այդ նոր քաղաքացիների սրտերը հանդեպ հայ ժողովրդի լավագույն բարեկամ ու փրկարար Ստալինի: Սովետական Միության հիմնին հետևում է Սովետական Հայաստանի հիմնը, որից հետո նույն ոգևորությամբ նրանք երգում են սովետական ժողովրդի սիրելի ու ամենատարածված երգերից մեկը՝ «Ընդարձակ է երկիրն իմ հարազատ»: Նրգի վերջին թռթրուուն ձայները տարածվելով մարում են ալիքների ծոցում:

Նապից նոր իջեցված ելարանով, որոտընդոստ ծափերի տարափի տակ, տախտակամած էն բարձրանում «Արտասահմանյան հայրենի նդունման և տեղավորման կոմիտե»-ի ախազահ Բ. Աստվածատրյանը, ՀՍՍՌ Ներքին Գործերի մինիստր Ի. Մաթևոսյանը, Արարիյի ԱՍՍՌ Ներքին Գործերի մինիստր



Մատուան, ներգաղթի կոմիտեի ներկայացուցիչները և թղթակիցները:

Դժվար է նկարագրել առաջին համադիպման ցնծովքունն ու հրճանքը. սրտահույզ գրկախառնություններին, ջերմ համբույրներին վերջ չկար. շատերը հուզմունքից չէին կարողանում զսպել իրենց արցունքները: Մերուելիները արտասովոր էին վերհիշելով ահա՛վր Եղեոնի օրերը, երբ հարյուրավոր հասարակության ղեկավարներն անթաղ թողնելով, մահվան սարսափից իզլված խնայողությամբ փախել էին անդարձ հարազատ վայրերից. թրքական զարհուրելի սպանդից փրկվելով և վտարված լինելով հայրենի օջախից, թափառելիս նրանք երկրից-երկիր, հայրենիքի կարոտը սրտներում, ճաշակելի պանգոխություններով դառնությունները և ահա այսօր նորից բախտը ժպտում է նրանց, նրանք վերադառնում են իրենց հարազատների գիրկը: Խոսքը վշտի, արդար ցասումի և անհուն հրջանկության զգացմունքներից ալեկոծվում է նրանց ներաշխարհը. նրանց խնդուն դիմերը ցողված են արցունքի կաթիլներով: Այլ հույզեր են փոթորկում պատանիների սրտերը. նրանցից յուրաքանչյուրը մտածում է տարիներով իր հոգու խորքում փայփայած երազների մասին, որոնք ահա շուտով իրականության պես են է փոխվելին հայրենի հողի վրա. նրանք այրվում էին հայրենիքին օգտակար լինելու և նրա սոցիալիստական ծավալուն շինարարությանը շուտափույթ մասնակցելու բուն ցանկությունից. ներքին գոհունակությունից նրանց մատաղ դեմքերը փայլում և կրծքերն ուռչում էին: Ժամանածների մեջ կային բազմաթիվ արհեստավորներ, գյուղատնտեսական բանվորներ, բժիշկներ և այլ մասնագիտության տեր անձինք: Ուղևորներից ամենափոքրը՝ Գեմիրճյան Անահիտը 20 օրական է՝ այս փոքրիկը բախտ կունենա հայրենի արևի տակ աճելու, առանց օտար հորիզոններ տեսնելու:

Սկսվում է ուղևորների փոխհանումը. ահա ահոն երջանկության ժպտը դեմքին Եսփից իջնում և առաջինը սովետական հողի վրա ոտք է դնում երիտասարդ հայուհի Հեքիմյան Քնարիկը իր երեք տարեկան աղջկա՝ Անիի և 11 տարեկան տղայի՝ Հայկի հետ. նա անչափ ուրախ է, որ իրեն վիճակվեց բախտը՝ առաջինը ոտք դնելու սովետական հարազատ հողի վրա. նրա հետ էր ամուսինը՝ Կարապետը, որը զրկված լինելով թրքահայաստանում գտնվող իր հայրական օջախից, պատանեկության հասակից պանդխտության մեջ է գտնվել. նա կոմբայնավար մեխանիկ է և իր քրտինքով շատ օտար

դաշտեր է ոռոգել, իսկ այժմ երազում է աշխատել հարազատ հայրենի հողի վրա. Կարապետի եղբայրներից Հակոբը փականագործ է, իսկ Գրգորը՝ էլեկտրիկ. սրանք աշտապում են օր առաջ իրենց ճիգ ու ջանքը միացնել հայրենիքում աշխատող հարազատ եղբայրների համատեղ ջանքերին:

Սովետական փոխադրված նոր քաղաքացիները առաջին հերթին իրենց սրբազան պարտքն են համարում երախտագիտական հեռագիր հղել Մեծ Ստալինին և Սովետական Հայաստանի կառավարությանը:

Անուհետև ուղևորներն առաջնորդվում են նրանց համար հատկապես նախապատրաստված ընդունման կետը, որի երեք բաժինները կահավորված են զսպանակավոր մահճակալներով և յուրաքանչյուրի կողքին փոքրիկ պահարան է դրված: Լուսավոր սենյակներից մեկում տեղավորված է բժշկական կայանը, որտեղ ուղևորներին բուժօգնություն է ցույց տրվում Երևանից ժամանած բժշկական անձնակազմի կողմից. բակում տեղավորված են լվացարանը, բաղնիքը և ճաշարանն իր խճահանոցով: Հատուկ սենյակներում եկվորները հնարավորություն ունեն իրենց հետաքրքրող բազմապիսի բոլոր հարցերի մասին տեղեկություններ ստանալու. կա նաև ընթերցարան, որտեղ կարելի է գտնել թարմ գրականություն զանազան հարցերի շուրջը: Ժամանածները շափազանց գոհ մնացին նմանօրինակ սպասարկումից: Ընդունման կետում մինչև ուղևորները չէին դադարում խոսակցությունները. նրանք խոսք—խոսք այստեղ ու այնտեղ հավաքված հարցերի տարափ էին տեղում իրենց դիմավորողների գլխին. հարցնում ինչ ամեն ինչի մասին,—Երևանում, Արարկիրում, Մալաթիայում, Նուպարաշենում և այլուր ապրող իրենց մերձավորների ու հարազատների, Հայաստանի նորակառույցների, հնգամյա պլանի, դիտությունների, արվեստի, գրականության ակնավոր ներկայացուցիչների մասին և այլն. պատմում էին իրենց կյանքից, խոսում իրենց նպատակները մասին, ծրագրեր կազմում հայրենի հողի վրա իրենց անելիքների համար:



Հունիսի 29-ն է. Երևանի հիմնարկներում, ձեռնարկներում, գործարաններում մեծ հետաքրքրություններ առաջացրեցին նրանց: Այդ օրը մայրաքաղաքի թերթերը առաջին էջի վրա տպագրել էին Հայկական Հեռագրական Գործակալության հատուկ թղթակցի հեռագրերը



Բաթումիից՝ «Տրանսիլվանիա» նավով արտասահմանյան հայերի առաջին քարավանի ժամանման մասին: Մայրաքաղաքի հրապարակներում, փողոցներում, տներում, ամենուրեք այդ մասին էին խոսում: Բոլորն էլ նախապատրաստվում էին գրկաբաց ընդունել երկար տարիներ օտարության մեջ դեպքոդ իրենց արյունակից եղբայրներին: Այդ և հաշորդ օրը բերկրալից լուրը տարածվեց ողջ Հայաստանում: Քաղաքներում ու գյուղերում նախապատրաստվել սկսեցին իրենց հարազատներին արժանավայել դիմավորելու համար: Եկվորներից շատերի հարազատները՝ մայրերն ու հայրերը, քույրերն ու եղբայրները, մերձավոր բարեկամներն ու

\*\*\*

Կովետական նոր քաղաքացիները Բաթումիից հատուկ գնացքով մեկնեցին Սովետական Հայաստան՝ Հայ պանդխտի տարիներով նուազած նվեալաց երկիրը: Հայաստանի երկաթուղային կայարանները տունական տեսք էին ընդունել. նրանք զարդարված էին գրողակներով և բարեզալուստի ու ողջունի բազմաթիվ լոզունգներով. «Բարի գալուստ, մեր հարազատներ», «Բոցավառ ողջունն արտասահմանյան մեր եղբայրներին՝ Կովսոդային բերքառատ դաշտերի աշխատավորներից», «Ողջուն սովետական նոր քաղաքացիներին», և այլն: Շատ վայրերում կայարանումներձ շրջանների աշխատավորու-



Գնացրը կանգ առավ հայրենի հողի վրա. Եկվորները զննցից իջել ու համբուրում են հայրենի հողը.

ազգականները, որոնք տասնյակ տարիներ ուսաց Հայաստան տեղափոխվելով մշտական բնակություն էին հաստատել այնտեղ, առաջին քարավանի ժամանման լուրը լսելով ցնծության մեջ էին. բոլորն էլ սրտատրոփ սպասում էին իրենց հարազատներին առաջին քարավանով ժամանածների մեջ գտնելու: Բազմաթիվ հեռագրեր են հղվում Բաթումի՝ իրենց հարազատների մասին հարցումներով լի:

Թյունը կայարաններն էր հավաքվում արտասահմանից ժամանած հարազատ եղբայրներին ու քույրերին ողջունելու համար:

Եկվոր երիտասարդությունը խոնվել էր վազոնների պատուհանների ու դռների առաջ. յուրաքանչյուր պատուհանից տասնյակի չույզ աչքեր անթաղթ դիտում են հայրենի բնությունը. նրանցից շատերը դուրսը դիտելու տեղ չգտնելով բարձրացել էին վազոնների կտուրը՝ հարազատ Հայաստանի



չքնաղ բնությամբ զմայլվելու համար: Ահա ո՛ւնացքն ուրախ սուլոցով մտնում է կուռվա գեղատեսիլ ու դուրթիչ լեռնաշխարհը: Բայց մննոր են, որ տեղում են ամեն կողմից, — այս ի՞նչ լեռ է, ի՞նչ գետ է, ի՞նչ բազալ է, ի՞նչ գյուղ է... հենց որ որևէ հագոնում փմացվում էր այս կամ այն հարցի պատասխանը, իսկույն ամբողջ գնացքի երկարությամբ կայծակի արագությամբ տարածվում էր.

— Լոռին է, Լոռին, — բացականչում են բոլոր վագոններից:

Բայց մի՞թե կարելի է անցնել կուռվա ձորով առանց հիշելու նրա անմահ երգչին, մանուկների ու մեծերի համար հավասարապես սիրելի մեր ամենաժողովրդական բանաստեղծին. և ահա վագոններից մեկից լսվում է մի երիտասարդի թավ ձայնը.

— Սա Լոռին է, Թումանյանի Լոռին:

— Ահա այս ձորերովն էր փախչում Լոռեցի Սաքոն քաջքերից հալածված, — լսվում է մի այլ վագոնից:

— Ահա և թավիչ կանաչով ծածկված Անուշի ու Սարոյի լեռները, — վագոնի պատուհանից մատով ցույց է տալիս մի դեռատի աղջիկ: Մի ուրիշը հիշում է որսկանի կանգատը երկաթուղու դեմ, որի սուլոցից անտառներում էլ պախրա շմնաց. մի երրորդը գետը ցույց տալով բացականչում է.

— Ահա և Թումանյանի գիծ Գե-Բեդը:

Գնացքը ոլորապատույտ ուղիով արագ առաջ է սլանում: Ահա անցնում են նրանք Ձորագեսի կողքից, զմայլվելով լեռան կրճերին փարված հիզրոկայանով, որը լույս ու ուժ է մատակարարում շրջակա գյուղերին ու գործարաններին: Բնության մեկը մյուսից գլուխից տեսարանների շարժապատկերների նման արագորեն հաջորդում են միմյանց, բայց ուղևորները կախարդված հայրենի վեհասքանչ բնության գեղեցկությունից չեն էլ մտածում մի պահ անգամ հեռանալու լուսամուտներից, վախենալով որևէ տեսարժան բան բաց թողնել: Հայրենի աշխարհի վեհապանծ լեռների, անդնդախոր ձորերի, սաղարթախիտ անտառների, փարթամ դաշտերի, դեղադիր գյուղերի, կոկիկ կայարանների, լեռնակատարների ու կիրճերի վրայով ձգված էլեքտրահաղորդման գծերի և գործարանների ծխնելույզներից դեպի վեր ձգվող ծխի սյունների տեսարանները հպարտության ու անհուն հրճվանքի զգացմունքով են համալում բոլոր եկվորների հայրենիքի կարոտից տոչորված սրտերը:

Գնացքը իր ետև թողնելով զարդարված շատ կայարաններ, սուրալով առաջ էր

շարժվում դեպի Սովետական Հայաստանի սիրտը՝ դեպի Երևան:

Եկվորների ցնծությունը հաղարպատվում է, երբ հեռվում արևի շողերով ոսկեղուծված, երևում այեղարդ Արարատը. գրնացքը դղրդում է անզուսպ բերկրանքի արտահայտության կանչերից. ակնապիշ ու անհագ նայում են նրանք հայ ժողովրդի հասարակարկական այդ լեռան: Մեր Արարատն այդ օրը դեն նետելով իր դեմքից ամպերի շղարշը, անհուն երջանկության ժպիտը վիթխարի դեմքին կալծես հրճվալից ողջուններ էր հղում հեռավոր ասիերից իր հարազատ մոր գիրկը դարձող սիրասուն զավակների:

Եկվորների մեջ շատ քչերը կգտնվեին, որ Արարատի նկարը տեսած, նրանով ոգևորված և նրան տեսելու ուխտն ունեցած շիրենն. օտար հորիզոնների տակ նրանցից շատերն ինչքան արցունքներ թափած կլինեն ու թախանձագին ախ քաշած Արարատի նկարի առաջ, իսկ այսօր ահա, Արարատյան լայնանիստ դաշտում հպարտորեն վեր խոյացած, նրանց դեմն է ելնում այդ տիտանական լեռը, նրանց մշտնջենական անուղջների առարկան: Ի՞նչ ուրախություն կարող էր այդ պահին համեմատվել նրանց ցնծության հետ, թերևս միայն նավարկության ենթարկված նավագների ուրախությունը, որոնք երկար ժամանակ ծովի ալիքների վրա տարուրերկվույց հետո առաջին անգամ ցամաք են տեսնում:

— Այսուհետև լթի մեռնեմ էլ, հոգս չէ, որովհետև իմ ուխտը կատարվեց. իմ նախնիքներից շատերն են երազել դեթ մի անգամ տեսնել Արարատը ու նոր հանգիստ սրտով աչքերը փակել, բայց, ավա՜ղ, այդ չի հաջողվել նրանց, մինչդեռ ես կանգնած եմ ահա երկնամերձ մեր հարազատ լեռան դեմ առ դեմ, — ասում է հուզմունքից դղրդողուն ձայնով մի ծերունի, որի աչքերից հոսող արցունքի խոշոր կաթիլները դեմքի վրայից ւահելով ցած են գլորվում:

Աստանդական հայ ժողովրդի համար Արարատը միշտ էլ հանդիսացել է Սովետական Հայաստանի խորհրդանիշը և այժմ Արարատի հանդեպ նրանք ավելի քան իրենց հայրենի հողի վրա զգալով՝ ուրախությունից արտասվում են:

Նրանցից Անահիտն ահա հայացքը հռոած ալեհեր Արարատին արտասվում է, հիշելով թե ինչպես իրեն ճանապարհ դնելուց մերձավորներն իր աչքերը համբուրեցին, ահելով «թող համբուրենք այս աչքերը, որոնք շուտով մի Հայաստանը, ձյունապսակ Արարատը, չքնաղ երևանը պիտի տեսնեն»:



Վագոններից նայողներին թվում էր, թի իրենք կանգնած են, իսկ ծեր Արարատը հավերժական ձյունե թագը ծածկած վաղում է, վաղում դեպի իրենց, կարծես փարվել է ուզում իրենց հետ:

\*\*\*

Հուլիսի 2-ն է. վաղ առավոտից Երևանի փողոցներով, հրապարակներով հարյուրավոր ավտոմեքենաներ են շարժվում՝ զարդարված դրոշակներով ու լողունգներով. նրանք բոլորն էլ ուղղվում են դեպի երկաթուղային կայարան: Կայարան են շտապում նաև բազմահազար մարդիկ՝ մայրաքաղաքի գործարանների, ֆաբրիկաների, նորակառույցների և հիմնարկ-ձեռնարկների աշխատավորները:

Նրանց մասին տեղեկություններ ստանալու հույսով: Հազարավոր դիմավորողներ կայարան էին եկել ծաղկեփնջերով: Ցնծում էր կայարանն ուրախությունից. կառամատույցի մի կողմը փողային նվագախումբն աշխույժ եղանակներ էր նվագում. մի այլ տեղ արվելյան նվագախմբի շուրջը հավաքված երգում ու պարում էին: Սակայն բոլորի հայացքն ուղղված էր դեպի գնացքի ժամանման կողմը: Մի պառավ արտասուքն աչքերին զրուցում էր իր կողքի կնոջ հետ.

— Յարաբ այս եկողները տեղեկություն չեն ունենա իմ բալից, որին կորցրի ես տարագրության սև օրերին. ասում են եկողների մեջ մեր համագյուղացիներ էլ կան:  
— Մի գուցե հենց եկվորների մեջ է,—



Երևանի կայարանում. դիմավորողների մի խումբ

Կայարանը տոնական տեսք էր ընդունել. կառամատույցը լեփ-լեցուն էր առաջին քաղաքում Սովետական Հայաստանի մայրաքաղաքը ժամանող արտասահմանյան հայերին դիմավորողներով: Այստեղ էին հավաքվել նաև մերձակա ավանների բնակիչները. այստեղ էին նաև եկվորներից շատերի հարազատները՝ ծնող, բույր, եղբայր, ազգական, բարեկամ կամ սոսկ համաքաղաքացիներ ու համագյուղացիներ, որոնք հավաքվել էին իրենց վաղուց անհետացած հարազատներին անակնկալ կերպով հանդիպելու կամ

հուսադրում էր նրա զրուցակիցը:  
— Օ՛, լեզվիդ մատաղ, ուրախությունից կգժվեմ ես,— ասում է պառավը:  
Մի այլ տեղ խմբված սպասող պատանիներից մեկն անհամբերությունից ասում է.  
— Այս գնացքն ինչու է այսքան ուշանում.  
— Երևի մեքենավարն էլ հարազատների հանդիպելով ուրախությունից մոռացել է ժամանակը,— կատակում է մյուսը.  
— Չէ, եկվորների ուրախությունն այնքան շատ է, որ նրա բեռից գնացքը ծանրացել ու



դանդաղ է շարժվում,— հարում է կատակով  
երրորդը:

Չարաճճի տղաներից երկուսը, լսելով կա-  
յարանում տեղաշարժվող շոգեմեքենայի  
սուլոցը, ամբողջ ձեղքելով առաջ են վա-  
զում բուռով:

— Սկավ, եկավ, գնացքն եկավ:

Բոլորը, նվազ, երգ ու պար մոռացած,  
խոնջվում են դեպի գնացքի ժամանման կող-  
մը. սակայն սպասվող գնացքը չէր երևում.  
մի պահ լարված ուշադրությամբ հետևելուց  
հետո ծովածավալ բազմութունն իրեն խաբ-  
ված չգալով ծիծաղով հտ է ընկրկում՝ մակ-  
ընթացությունը տեղաալովության փոխելով:

Նորից սկսվում են երգ ու պարը, նվագը,  
զվարճախոտությունները: Քիչ անց շարաճճի-  
ները կրկին փորձ են անում խաղ խաղալ,  
բայց ապարդյուն: Մի խումբ փոքրիկներ  
բարձրացել են կայարանին մոտիկ ծառերի  
վրա, որպեսզի առաջինն իրենք նկատեն  
գնացքի երևալը:

Վերջապես հեռվում նկատվում է ձգվող  
ծխի երկարավուն ժապավենը. բայց դեռ  
կասկածում են, թե կարող է սպասվող գը-  
նացքը շինել, այլ մի ուրիշը. կայարանին  
արագորեն մոտեցող գնացքի երկար, ականջ  
ծակող սուլոցը վերջնականապես փարատում  
է թերահավատների կասկածը, սուլոցին  
միախառնվում են երեխաների զվարթ բա-  
յականշուխություններն ու ուռաները: Իրենց  
հարազատներին հանդիպելու մոտալուտ եր-  
ջանկությունից փոխվում է շատերի դեմքի  
արտահայտությունը. նրանք մտովի արդեն  
գրկում, ողջագուրում, համբուրում էին ի-  
րենց հարազատներին, աշխատում վերա-  
կանգնել նրանց պատկերը, ձգնում ծանոթ  
դիմագծերի հիման վրա ուրվագծել նրանց  
փոխված, անճանաչելի դարձած կերպարը,  
հիշել առանձնահատուկ նշանները. մտահոգ-  
ված էին թե տեսնելուց ինչպես պետք է ճա-  
նաչելին իրար:

Գնացքը թափով մոտենում էր կայարանին  
և դրա հետ մեկտեղ աճում էր թե սպասող-  
ների և թե եկվորների հուզմունքը. եկվորնե-  
րի դեմքերի արտահայտությունից կարելի էր  
նկատել նրանց ներքին զուսպ կենտրոնաց-  
վածությունը. նրանք սուզվելով իրենց ներ-  
աշխարհը մի պահ հանկարծ լուսկյաց դար-  
ձան... անցյալի հազարավոր պատկերները  
շարան-շարան գալիս ու քարավանի պես  
անցնում էին նրանց աչքերի առջևից. շատե-  
րը նրանցից թախծով վերհիշելով ծանոթ  
թանկագին դեմքերը, շարունակում էին մի  
առանձին ներքին ջերմությամբ փայփայել

իրենց հոգու ընդերքում անմար պահվող  
հույսը՝ կորցրած հարազատներին հայրենի  
բուն գանձու, հանդիպելու հույսը:

Գնացքն ընդհուպ մոտենում է կայարա-  
նին. շոգեքարշի առջևի մասում ամբողջված  
էր մեծ Ստալինի պորտրեն՝ դրոշակներով ու  
ծաղիկներով զարդարված: Վագոնների պա-  
տուհաններից կարոտագին դուրս են նայում  
ծեր ու մանուկ, կին ու տղամարդ. անհուն  
է նրանց բերկրանքը. օտարության մեջ ի-  
րենց սրտի խորքում նրանք միշտ գուրգու-  
րել ու պահել են այն նվիրական ղապցումը,  
թե սրտի գահայրենադարձի բազմալի ժամը  
և ահա այսօր տարիների երազանքը երջա-  
նիկ իրականության է վերածվել. նրանք ար-  
դեն իրենց հայրենիքումն են՝ շրջապատված  
հարազատներով: Վագոնների պատուհաննե-  
րից ի նշան ողջունի բազմաթիվ գլխարկներ  
ու թաշկինակներ են ճոճվում. ի պատաս-  
խան դրան կառամատուլցում գլխարկների  
ու թաշկինակների ալծուսի ծով է գոյանում:

Հենց որ գնացքը մոտենում է կառամա-  
տուլցին՝ ողջունի սրտագին բացականչու-  
թյունները պոռթկում են երկուստեք. ծափող-  
չունների փոթորիկից թնդում է կայարանը.  
մայրաքաղաքի աշխատավորությունը բուն  
ծափերի տարափով է դիմավորում սովետա-  
կան նոր քաղաքացիներին, օտարությունից  
հայրենիք դարձած իր պանդուխտ եղբայր-  
ներին:

Դանդաղ կանգ է առնում գնացքը. լուռ է  
մի պահ նվազախումբը. տիրում է, ինչպես  
գոռ փոթորկից հետո, հանդիսավոր լու-  
թյուն. բոլոր վագոններում երգում են Սովե-  
տական Հայաստանի պետական հիմնը:

Ավարտվում է երգը. նորից վերսկսվում է  
ծափողջունների փոթորիկը:

Նվազածության, ցնծագին բացականչու-  
թյունների ու ծափերի տարափի տակ ուղե-  
վորներն իջնում կամ ավելի ճիշտը՝ դուրս  
են սլանում վագոններից:

Ի՛նչպիսի սրտառուչ հանդիպում:

Ծանոթ, անծանոթ, նույնիսկ իրենց կյան-  
քում առաջին անգամ հանդիպող մարդիկ  
իրար են փաթաթվում, ողջագուրվում, գրկա-  
խառնվում՝ ազատություն տալով սրտներում  
տարիներով կուտակված կարոտի զգաց-  
մունքներին: Անհնար է նկարագրել մեր  
պանդուխտ եղբայրների հայրենասիրական  
բուռն զղացմունքների պոթիցումը:

Իսկ ո՞րքան սրտահույզ են հարազատնե-  
րի հանդիպման տեսարանները. ահա մայրը  
անսպասելիորեն հանդիպում է իր սիրասուն  
զավակին, որից երկար տարիներ լուր չու-



ներ: Մայր ու որդի մի պահ քարացած կանգնել ու աննապիշ իրար են նայում: Նրանք չեն հավատում իրենց աչքերին, վարանման մեջ են դեռ, վախենում են պատրանքից. արցունքի կաթիլներն ակոսներ դժելով սահում են մոր այտերի մրայից, ճշալ է ուզում ուրախությունից, բայց չի կարող, ձայնը մարել է կարծես, խոսել է ուզում, լեզուն չի հնազանդվում, կարկամել է հուզմունքից. մի պահ և որդին հանկարծ գետնից պոկվում, թափով առաջ է նետվում ու հուժկու առնական բազուկներին մեջ աննում հարազատ, թանկագին մորը.

— Մայր ի՛մ, մայր ի՛մ..... կրկնում է նա դողդողջյուն ձայնով:


Մայրը հուզմունքից ոչ մի բառ արտասանել չի կարողանում և գլուխը որդու կրծքին

ցից ոմանք չեն կարողանում զսպել արցունքները:

Բազմաթիվ են այսպիսի սրտաշարժ հանդիպման տեսարանները:

Լուսանկարիչները, կինո - օպերատորները տեղից տեղ են վազում հայ ժողովրդի իղձերի իրականացման, հանդիպման այս հուզիչ տեսարանները նկարահանելու, կինոժառանգի վրա դրոշմելու համար: Տարիներ պանցնեն և ներգաղթողների նոր, երջանիկ սերունդները երբևէ էկրանի վրա կդիտեն իրենց բախտավոր ծնողների, պապերի ոտք դնելը հայրենի հողի վրա:

Սովետական նոր քաղաքացիներին դիմավորելու համար կայարան էին եկել պարտիական, սովետական ղեկավար աշխատողներ, գրականության, արվեստի բազմաթիվ



**Նրևանի կայարանում.**

Արտասահմանյան հայերի առաջին ֆառավանի ժամանումը.

սեղմած հեկեկում է՝ վերհիշելով մղձավանջի օրերը, երբ կորցրեց իր բոլոր զավակներին ու մտածում է՝ թե որդին արդյոք տեղեկություն չո՞ւնի մյուսներից. սակայն այդ մասին հարցնել դեռ անկարող է. և առանց գլուխը որդու կրծքից հեռացնելու՝ ձեռքով շոյում է նա անդադար որդու դեմքը, մազերը. կարծես աչքերին չհավատալով ցանկանում է շոշափելով ստուգել հարազատ դիմազծերը:

Հուզված են նաև շրջապատողները. նրան-

գործիչներ:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին յոց ներգաղթի կոմիտեի նախագահ Բ. Աստվածատրյանը Սովետական Հայաստան վերադարձող արտասահմանյան հայերի առաջին քարավանի ժամանմանը նվիրված միտինգը բացված է հայտարարում: Տրիբունի վրա է բարձրանում աշխատավորների դեպուտատների Նրևանի Քաղաքային Սովետի գործկոմի նախագահ Լ. Հովսեփյանը. նա



չերմորեն ողջունում է Սովետական Հայաս-  
տան եկած արտասահմանյան հայերին:

— Աշխատավորների ղեկավարողների  
կողմանի Քաղաքային Սովետի գործկոմի և  
մայրաքաղաքի ողջ աշխատավորության ա-  
նունից հայրենի երկիր վերադարձած մեր  
տարագիր եղբայրներին և քույրերին ողջունյ  
և բարի գալուստ:

Այն օրվանից, երբ դուք ձեր ոտքը դրիք  
սովետական սրբազան հողի վրա, այդ օր-  
վանից վերջ է տրվում այն տառապանքներին  
ու զրկանքներին, որ դուք կրեցիք օտմանյան  
լծի տակ, օտարության մեջ, կապիտալիզմի  
ձիրաններում: Դուք, մեր սիրելի եղբայրնե-  
լ ու քույրեր, սովետական հզոր ու մարդանե-  
լ պետության բազմազգ ընտանիքում, ստա-  
լինյան նենարար արևի տակ կմոռանաք  
անցյալի դառնությունները, ձեր պանդխտու-  
թյունը. նոր եռանդով և ուժով մեզ հետ միա  
սին կլծվեք վերածնված հայ ժողովրդի սո-  
ցիալիստական. ստեղծագործ աշխատանքին:  
Իրականացավ ձեր տարիների իղձը, իսկ  
մենք անսահման ուրախությամբ այսօր  
հանդիպում և ընդունում ենք ձեզ մեր հայ-  
րենիքի մայրաքաղաքում: Մեր տարագիր  
եղբայրների և քույրերի հետ միավորվելու  
մասին մեծ իղձերի իրագործման համար  
մենք պարտական ենք Սովետական Միու-  
թյան եղբայրական բոլոր ժողովուրդներին և  
առաջին հերթին հերոսական ու ազնիվ ռուս  
ժողովուրդին: Այս նվիրակալ ու եղջանիկ  
նուպեններին մեր բոլորի սրտերը լցված են  
անսահման երախտագիտության զգացմուն-  
քով դեպի մեր դարի մեծ հայրենասերը, հայ  
ժողովրդին կորստից փրկող և ամենահողա-  
տար հոր, մեր հանձարեղ ընկեր Ստալինը:

— Կեցցե՛ մեր հզոր սովետական հայրե-  
նիքը:

— Կեցցե՛ մեզ հաղթանակից հաղթանակ  
տանող ընկեր Ստալինը:

Թնդում է հուժկու ուռան ի պատիվ մեծ  
Ստալինի:

Ամբիոն է բարձրանում արտասահմանից  
վերադարձած բժիշկ Գևորգ Մանուշակյա-  
նը: Նա հուզմունքից հագիվ զսպելով ար-  
ցունքները, սրտագին կերպով ողջունում է  
Նրևանի աշխատավորությանը և շնորհակա-  
լության առաջին խոսքը արտասահմանից  
Հայաստան վերադարձող բոլոր հայերի ա-  
նունից ուղղում է մեծ Ստալինին:

Նորից վերսկսվում է օվացիան, նորից  
ուռաներ, նվազածություն:

Միտինգը վերջացած է:

Քանկագին հյուրերը առաջնորդվում են  
դեպի կայարանի շուրջը վաղուց սպասող՝

դրոշակներով ու լողունգներով զարդարված  
ավտոշարասյունները: Հյուրերը տեղավոր-  
վում են ավտոմեքենաների վրա և բազմաթիվ  
ծանոթների ու հարազատների ուղեկցու-  
թյամբ շարժվում դեպի իրենց հատկացված  
բնակարանները: Ծանապարհի երկու կողմը  
խոնաված մարդիկ ծաղկեփնջեր են նետում  
դեպի ավտոշարասյունները, ամեն կողմից  
ձեռքով ողջունում, բացականչում:

— Բարի գալուստ:

— Բարով եք եկել, մեր թանկագիններ:



Ավտոմեքենաներից մեկը կանգնեց վար-  
դագույն տուֆից կառուցված, սքանչելի մի  
շենքի առաջ: Մեքենայից ցած իջան վարպետ  
Միսակը, նրա ընտանիքի անդամները և ու-  
ղեկիցը, որը նրանց առաջնորդեց շենքի եր-  
րորդ հարկը, ուր մի կոկ բնակարան էր  
հատկացված նորեկներին: Մինչ նրանք բնա-  
կարանն էին դիտում, շենքի բնակիչները  
մեքենայից նոր հարևանի իրենց իջեցնելով  
իսկույն բնակարան տեղափոխեցին. թանկա-  
գին հյուրերին գուրգուրանքով, հոգատարու-  
թյամբ շրջապատելով հարևանների ցանկ  
մեկն աշխատում էր տրեկ բանով օգտակար  
լինել նրանց: Բնակարանը դիտելուց հետո  
ուղեկիցը վարպետին և նրա ընտանիքի ան-  
դամներին հրավիրեց բնակարանի պատշ-  
կամբը. գերված պատշկամբից բացվող դուռ-  
թիչ տեսարանով նրանք անհագ ու զմայլված  
դիտում էին հայրենի աշխարհի թովիչ գե-  
ղեցկությունը՝ ստանց որևէ բառ փոխանա-  
կելու: Նրանց աչքի առաջ փոփած էր մայրա-  
քաղաքի մի զգալի մասը հեքիաթային գե-  
ղեցկություն ունեցող իր ծառազարդ փողոց-  
ներով ու վարդագույն շենքերով. ապա քա-  
ղաքից ծայր առնելով տարածվում էր հեռու՛,  
հեռու՛, Արարատյան լայնարձակ դաշտը՝  
փարթամ այգիների մեջ թաղված, իսկ դեմը  
կարծես մոտ, շատ մոտ, վերջալույսի ճառա-  
գայթներով ողողված վիթխարի Արարատն  
էր կանգնած իր պսպղուն հավերժական  
սառցադաշտերով:

Այդ պահին նրանցից յուրաքանչյուրի հա-  
յացքը տարբեր ապրումնե: էր արտահայ-  
տում, ապրումներ, որ որևէ բառով արտա-  
տահայտվել չեն կարող:

Արծվի հայացքը հեռուներն ուղղած ինչ-  
պիսի սիրտ խոցող անցքեր ստես, որ չվե-  
րապրեց վարպետ Միսակը. նա վերհիշեց  
իր հարազատ Տավրոսի լեռները, լեռնայան-  
ջերին փոփած այգիներն ու պարտեզները,  
լեռնահովիտների ծփուն արտերը և լեռնա-  
ծերպերին թառած գյուղերն ու քաղաքները,



որոնք ամալին են այսօր վերհիշեց, թե ինչպես աճալոր ու անհավասար օրհասական պայքարից հետո հրկիզվեց իր ծննդավայրը, թե ինչպես այդ մեծ ոճիրի օրերին տարապրուստյան դիպածով ու արյունաթափախ ճամբաների վրա իր աչքերի առաջ սրայտուխող արվեցին իր բոլոր հարազատները, թի ինչպես ինքը յուրայինների արյունով ցողված այդ ուղիներով, նրանց անթաղ դիերի կողքից խեղճորույս քայլից մինչև արարական անապատի ավազուտները և իր երեք հարյուր հարազատներից ու ազգականներից միայն ինքը ողջ մնաց: Ծանր կսկծից, ահռելի վշտից, անհատակ վրեժի ու ցասումի զգացումից միայլ սկսեց նրա սիրտը: Այս վերհիշեց իր պանդխտութայն տարիների շարանը, երբ հայրենագուրկ, շրջապատված անկարեկից օտարներով թափառել է երկրեերկիր, շատ անգամ սոսիած, անօթևան, գործազուրկ, հայրենի զով լեռների կարոտը սրտում. հիշեց թե ինչպես միշտ երազել է Սովետական Հայաստան մեկնել ու իր օջախը հիմնել կորցրած ու վերստին ահրացած հայրենիքում:

Ու ահա, այսօր իրականացել են նրա երազները, նա իր հայրենիքումն է:

Սակայն անցյալի դառն հուշերը չէ, որ այդպես խորը հուզում, ալեկոծում էին վարպետ Միսակի սիրտը, այլ այն, ինչ որ նա տեսավ հայրենիքում. նրա համար ամենահուզիչն դա սովետական մարդկանց ջերմ գուրգուրանքը. զրկաբաց ընդունելությունը, աննկարագրելի հոգատարությունն էին: Շատ երկրներ էր գաղթել նա, բազում թշվառությունների բովից անցել, մեծ զրկանքների ու հալածանքների ենթարկվել, բայց նման հոգատար վերաբերմունքի չէր հանդիպել և ոչ մի տեղում: Ծառակած դառնություններն ու դաժանությունները վազուց բթացրել էին նրա զգացմունքները. ոչ ոք չէր հիշում, որ վարպետ Միսակն արտասոված լինի, նույնիսկ հարազատների մահվան դեպքում. սակայն այսօր շրջապատի ջերմ ու հոգատար վերաբերմունքից խորը հուզվեց, փափկեց նրա սիրտը և արցունքի ծանր կաթիլները կախվեցին աչքերից:

Հարևանները և ուղեկիցը շուտով բաժանվեցին նուսնցից. վարպետ Միսակը բաժանման ժամանակ հուզված ասաց.

—Ձեր հոգատար վերաբերմունքը տեսնելով անհուն երջանկությունից բառեր չեմ գտնում իմ անսահման երախտագիտությունը գեթ մասամբ արտահայտելու համար. միայն կասեմ, որ դուք մեր հայրենիքը ծաղկած

երկրի վերածելով հնարավոր դարձրիք մեր վերադարձը և մենք շատ ու շատ պարտք ենք ձեզ. մեր սրբազան պարտականությունն է հատուցել այդ պարտքը: Դուք այսպիսի փառահեղ տներ եք կառուցել մեզ համար, մենք էլ մեր հերթին կշինենք մեր այն եղբայրների համար, որոնք աշխարհի բոլոր ծայրերում դեռ դեգերում են օտարութայն մեջ:

Ուղեկիցը հրածեղտ տալուց, խոստացավ մյուս օրը վերադառնալ ու նրանց աշխատանքի վայրն առաջնորդել:



Գիշերը փոեց իր թևերը մայրաքաղաքի վրա:

Արտասահմանից նոր ժամանածների մի խումբ, որ իջել էր Արաբկիրում վաղուց բռնակություն հաստատած հարազատների տանը, պասշկամբից ղմայլված դիտում էր էլեկտրական լույսերով ողողված մայրաքաղաքը. անբաղդատելի գեղնցկություն ունի Քանաքեռի բլրի վրայից գիշերը բացվող այդ տեսարանը. քաղաքը երևում է անծայրածիր տարածված, ընդհուպ մինչև Արարատը. թվում է, թե էլեկտրական լույսեր են վառվում նաև Արարատի փեղջերին: Հեռավոր հորիզոնում էլեկտրական լույսերն այնպես են միախառնվում աստղերին, որ նայողը հաճախ դժվարանում է աստղը տարբերել էլեկտրական լույսից. շգիտես աստղ է առկայծում, թե էլեկտրական լամպն է փայլիլում հորիզոնում: Նայում ես երկնակամարին ու նայում առաջդ փռված քաղաքին և քեզ թվում է, թե երկնքի մի հատվածն է իր բյուրավոր աստղերով իջել այդպես ու համատարած սփռվել մայրաքաղաքի վրա: Լույսերի մի ամբողջ ծով է կարծես փռված առջևդ. իսկ ծեր Արարատը աստղապսակ գլուխը վերցցած դիտում է լույսերի այդ ծովն ու հրեծվում, թե ինչպես մարդիկ կարողացել են իր ստորոտում ստեղծել լույսերի այդպիսի մի ծով, իր գլխավերևի աստղերի հետ մրցող:

Նույն գիշերը Քանաքեռի բլրալանջից ուրիշ շատ աչքեր էլ առաջին անգամ դիտեցին այդ սքանչելի տեսարանը:

Այդ գիշերը ուրիշ բազմաթիվ նորեկներ էլ հարազատների ու ծանոթների ուղեկցությամբ պտուկտի ելան մայրաքաղաքի այգիները, հրապարակները, փողոցները. նրանք սքանչալցած էին մայրաքաղաքի գիշերային գեղեցկությամբ: Ահա մի խումբ անցնում է Ստալինի անվան պողոտայով. նրանք հիացած են ընդարձակ, ծառազարդ, լուսաշատ, ամֆալտապատ, ուղիղ ձգվող փողոցով. ահա



մի ուրիշ խումբ դիտում է օպերայի շենքը, մի այլ խումբ Արուվյան փողոցով վար է իջնում և այլն:



Մյուս օրը վարպետ Միսակի ուղեկիցը, իր խոստման համաձայն, այցելեց նրանց և Միսակին ու նրա երկու տղաներին առաջնորդեց նրանց մասնագիտության համապատասխան նշանակված աշխատանքի վայրերը:

Ճանապարհին նրանք անցան Լենինի հրապարակով, վարպետն ու նրա տղաները դուրսված հրապարակի սքանչելի տեսքից, խնդրեցին ուղեկիցին մի պահ սպասել, որպեսզի հնարավորություն ունենան դիտելու Լենինի արձանը, հրապարակը, կառավարական տունը. ուղեկիցը սիրով համաձայնեց ու բացատրություններ էր տալիս ամենի մասին. թովված տեսարանի վեհությունից ներքաճեց երկար ժամանակ տեղներում քարացած անհագ դիտում էին: Չկա ավելի վեհ տեսարան, քան արևի շողերով ողողված Արարատի հավերժական սառցադաշտերի ֆոնի վրա երևացող Լենինի հոյակապ արձանը՝ հաղթականորեն վեր խոյացած Հայաստանի մայրաքաղաքում:

Հրապարակի տեսարանով սքանչանալուց հետո նրանք դիմեցին աշխատանքի վայրերը, ուր գրկաբաց ընդունելություն գտան. աշխատանքի ձևակերպվելուց հետո նրանք շցանկացան տուն գնալ ու հաջորդ օրն աշխատանքի գալ, այլ նու՛յն օրն աշխատանքի անցան ճեմեր պարտքը հայրենիքին շուտ հատուցելու համար» — ինչպես ասաց վարպետ Միսակը:

Բայց վարպետ Միսակը երջանիկ բացառություն չէր կազմում: Այդպիսի ջերմ ու հոգատար վերաբերմունքի արժանացան արտասահմանից ժամանած մեր մյուս բոլոր եղբայրներն ու թուրքերը:



Սակայն ոչ միայն մայրաքաղաքում, այլև ամենուրեք մեր արյունակից եղբայրներն

այդպիսի գրկաբաց ընդունելություն գտան: Սրտագին էր ընդունելությունը նաև Հայաստանի երկրորդ խոշոր քաղաքում՝ Լենինականում:

Հուլիսի 2-ին հատուկ գնացքով Բաթումից Լենինական ժամանեց 800 հոգուց բաղկացած արտասահմանյան հայերի մի մեծ խումբ: Գնացքը ժամանելուց դեռ շատ առաջ Լենինականի աշխատավորությունը կայարան էր հավաքվել թանկագին հյուրերին դիմավորելու համար: Երբ ժամանում է հատուկ գնացքը ծափերի ու բացականչությունների ձայնից թնդում է կայարանը: Կառամատուցում տեղի է ունենում միտինգ. Լենինականի աշխատավորության անունից ողջունի խոսք է ասում Լենինականի Քաղսովետի գործկոմի նախագահ Գ. Գյոդակչյանը. ողջունի ջերմ խոսքերով հանդես են գալիս երկաթուղային Փ. Զատիկյանը, վաստակավոր ուսուցիչ Ս. Խաչատրյանը, դերասան Ա. Հարությունյանը, կոմպոզիտոր Ումրջատը: Ծնորհակալական պատասխան խոսքով հանդես են գալիս Հայրենիք ժամանածների ներկայացուցիչները:

Երիտասարդ Ալիշան Բայրամյանը վերադարձողների անունից անկեղծ շնորհակալություն է հայտնում Սովետական կառավարությանը և սիրելի առաջնորդ Մեծ Ստալինին՝ երկարամյա տարագրությունից ազատագրելու համար. ապա ողջունում է Լենինականի աշխատավորությանը ջերմ ընդունելության համար: Այնուհետև ելույթ է ունենում Լուսիկ Մախյանը:

Միտինգն ավարտված է. գնացքն աշխատավորության ներկայացուցիչների երգ ու նվագի ուղեկցությամբ դանդաղորեն մոտենում է ընդունման կայանին, որտեղ բոլոր հարմարություններն ստեղծված են նորեկների համար:

### ՆԵՐԳԱՂԹՈՂՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՐԱՎԱՆԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Հուլիսի 15-ին կրկին Բաթումի ժամանեց «Տրանսիլվանիա» ջերմանավոր:

Այս նավը, որ ունի 7500 տոնն տարողություն, ռումինական նավերից ամենաշքեղն է. նրա, 38 տարեկան, երիտասարդ նավապետ Թոքաթլյանը, որ ազատ տիրապետում է տասնյակ լեզուների, ռումինահայ է, Բուխարեստում ծնված:

Բաթումիում նորից կրկնվեցին հանդիման սրտառուչ տեսարանները: Այստեղ 60-ամյա Ազնիվ Բոստանյանը հանդիպեց իր երկու դուստրերին, որոնց նա 30 տարի առաջ կորցրել էր Բայրազդում՝ թուրք ենիչերիների ձեռքից փախչելու ժամանակ: Եստ տարիներ անց Ազնիվին հաջողվել էր իմանալ, որ իր դուստրերը՝ Զաբելը և Արմենու-



հին ողջ են և ապրում են Բաթումիում. և ահա նավից իջնելուց Ազնիվը ծոցից անմիջապես հանեց ծալած թաշկինակը, որի մեջ գտնվում էր իր դուտորերի հասցեն ու մեկնեց իրեն դիմավորող սովետական մարդկանց. սակայն նրանց փնտռելու կարիքը չզգացվեց. նրան դիմավորելու համար նավահանգիստ էին եկել ոչ միայն նրա երկու դուտորերը, այլ և թոռը՝ Քնարիկն իր փոքրիկ Սվետլանայի հետ. անսահման է Ազնիվի ուրախությունը. շրջապատված է նա արդեն իր հարազատներով:

\*\*\*

Հուլիսի 18 է:

Ներգաղթողների երկրորդ խմբին դիմավորելու համար Երևանի երկաթուղային կայարանում վաղ առավոտից դարձյալ դիմավորողների մեծ բազմություն էր հավաքվել: Կայարան էին եկել ոչ միայն Երևանի ու ներքա մերձակա շրջանների աշխատավորները. այլ և առաջին քարավանով ժամանած բազմաթիվ սովետական նոր քաղաքացիներ: Բոլորն էլ գիտեին, որ գնացքը պիտի ժամանի 6-7 ժամ հետո, բայց և այնպես հավաքվել ու անհամբեր սպասում էին:

Գիմավորողների բազմությունը հետզհետե ստվարանում էր: Կայարան եկան նաև մայրաքաղաքի պարտիական, սովետական ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Կայարանամերձ փողոցում դրոշակներով ու լոզունգներով զարդարված ավտոմեքենաները երեք շարասյուն կազմած պատրաստ սպասում են ժամանողներին, որպեսզի նրանց՝ հատկացված քնակարանները փոխադրեն:

Վերջապես ժամանում է գնացքը. ջերմ ողջույնների ու բուռն ծափերի մի խելահեղ փոթորիկ է բարձրանում: Գիմավորողների ու Հայրենիք ժամանածների այտերին նկատվում են կարոտագին սպասումի, հուզումի և խնդրության արցունքներ: Վազոններից մեկի դիմաց ահա հարյուրավոր մարդիկ են խոնավել. մի երիտասարդ վազոնի պատուհանից դուրս է նետել իրանը և երաժշտական գործիքը գրկած սրտահույզ նվագում ու հետոն էլ անուշ ձայնով հայերեն երգեր է երգում. ունկնդիրները բուռն ծափերով ու սրտագին ողջույններով են դիմավորում շնորհալի երգչին: Հանդիպումն անմասն հայրենասիրական ցույցի է վերածվում: Գնացքից իջնողները դիմավորողների զիրկն են նետվում, գրկախառնվում թե ծանոթների և թե անծանոթների հետ:

Նորից կրկնվում են հանդիպման սրտառու տեսարանները՝ իրար են հանդիպում երկար տարիներ միմյանցից բաժանված, նույնիսկ միմյանց ողջ լինելու մասին տեղեկություն չունեցող հարազատներ: Ահա սովետական քաղաքացի Պ. Թուֆունջյանը հայրենի հողի վրա անսպասելի կերպով հանդիպում է իր հարազատ մորն ու քրոջը, որոնց նա կորցրել էր ավելի քան երեսուն տարի առաջ. ո՞րքան ցնցիչ էր հանդիպման այդ տեսարանը: Թուֆունջյանն անակնկալի գալով մի պահ կորցրեց իրեն, շշմեց, տեղում գամված մնաց և շիմանալով ինչպես արտահայտել իր անհատակ երջանկությունը, սկսեց լալ. իսկ մայրը ցնցված անսպասելի երջանկությունից խելակորույս փաթաթվեց իր սիրտսուն գավակին ու երկար, երկար ժամանակ բաց չէր թողնում նրան. հորդում էին ուրախության արցունքները մոր աչքերից ու կաթիլներով կրծքին սեղմած շավակի դեմքին: Վազոններից մեկում տեղի էր ունենում մի ուրիշ նույնպիսի սրտաշարժ տեսարան. սովետական ուսուցիչ Հ. Գինոսյանն ամբողջ գրկել էր մի երկարահասակ տղամարդու, իր հարազատ եղբորը, որին նա կորցրել էր երեսուն և մեկ տարի առաջ ու այլևս ոչ մի տեղեկություն չունեի: Եղբորը միշտ հիշելու համար Գինոսյանն իր ամբողջանիկ որդուն նրա անունով կոչել էր Բենիամին. և ահա երեսուն և մեկ տարուց հետո, հայրենի հողի վրա Գինոսյանը նորից հանդիպում է իր հարազատ եղբոր հետ: Սրտաշարժ հանդիպման այդ տեսարաններից հուզվում են նաև շրջապատողները, որոնցից շատերի աչքերից արտասուքի կաթիլներ են զորովում:

Անհաշիվ են հուզիչ տեսարանները. ահա մի այլ վազոնի մոտ տեղի է ունենում մի ուրիշ տեսարան. Սովետաշենի կոլտոգի նախագահ Գ. Թաշարյանը համազուլուացի էր փնտռում ու հանկարծ անսպասելի կերպով պարզվում է, որ նրա խոսակիցը հենց իր հարազատ քրոջ որդին է. նրանք իրար են փաթաթվում: Նման սրտահույզ տեսարանների կարելի է ականատես լինել նաև մյուս վազոնների շուրջը:

Առաջին քարավանով եկածները ողջագուրվում են նոր ժամանած իրենց հարազատների, մերձավորների ու ծանոթների հետ. նրանց փոխադարձ հարցումներին վերջ չկա. նոր ժամանածները հարցերի տարափ են տեղում նրանց զլխին. նրանք ցանկանում են առաջին քարավանով ժամանածներից իմանալ իրենց հետաքրքրող շատ հարցերի մասին: Վերջիններս սիրայի կերպով պատմում են նրանց ամենը, ինչի մասին որ նրանք



լսել կցանկանային և մյուս կողմից հետաքրքրվում իրենց այն մերձավորների վիճակով, որոնք ղեռ պիտի ժամանեին:

Մինչդեռ հանդիպման սրտառուչ տեսարանները ու աշխույժ զրուցյաները շարունակվում էին, ավտոմեքենաներն ընդհուպ մոտեցան գնացքին. Երևանի ուսյունների կազմակերպությունների ներկայացուցիչները նոր ժամանածներին հրավիրեցին մեքենաները նստելու, որից հետո լուրաբանչուր ընտանիք ուղեկցվեց իրեն հատկացված բնակարանը:



Նույն օրը, հուլիսի 18-ին նմանօրինակ հանդիպում տեղի ունեցավ նաև Լենինականի կայարանում, ուր հատուկ գնացքով ժամանեցին 470 հոգի:



Հուլիսի 17-ին երկրորդ քարավանով ժամանածներից վերաբնակների մի մեծ խումբ էլ ժամանեց Կիրովականի կայարանը: Ժա-

մանողներին կայարանում դիմավորեց քաղաքի բազմահազար աշխատավորությունը: Կառամատուցյում տեղի ունեցած միտինգում աշխատավորների ղեկավարատաների կիրովականի շրջանային Սովետի գործկոմի նախագահ Ա. Բագոյանը Կիրովականի աշխատավորների անունից ջերմորեն ողջունեց Հայրենիք ներգաղթած հայ եղբայրներին: Քիմիական գործարանի բանվորների, ինժեներատեխնիկական անձնակազմի անունից ժամանածներին ողջունեց ինժեներ Զ. Կոտանյանը, երկաթուղայինների անունից՝ ՀՍՍՌ Գերագույն Սովետի ղեկավարատ, գծի վարպետ Խ. Մարուքյանը, քաղաքի ինտելիգենցիայի անունից՝ վաստակավոր ուսուցիչ Մ. Մովսիսյանը և ուրիշները: Ներգաղթողների անունից երախտագիտական ջերմ խոսքերով հանդես եկան Ս. Միքայելյանը և Ե. Դաբեսյանը: Միտինգից հետո կազմակերպված ձևով վերաբնակները ավտոմեքենաներով փոխադրվեցին իրենց հատկացված բնակարանները: Վերաբնակների մի այլ խումբ Կիրովական կայարանից ավտոմեքենաներով մեկնեց Դիլիջան:

### ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Վերաբնակների երկրորդ, ինչպես և առաջին, խմբերը Սովետական Հայաստան ժամանեցին, անցնելով նրա հյուսիսային դռներից. և մինչդեռ Հայաստան էր ժամանում հյուսիսից երկրորդ խումբը, ներգաղթողների առաջ բացվեցին նաև հարավային դռները: Հուլիսի 17-ին հատուկ գնացքով Զուլֆա ժամանեց իրանահայերի առաջին խումբը՝ թվով 440 մարդ: Տոնական տեսք էր ընդունել Զուլֆան. թե կայարանը և թե շրջակայքը դարդարված էին ալ-կարմիր դրոշներով, բարեգալուտի լոգուններով, պարտիայի ու կառավարության ղեկավարների նկարներով:

Գնացքը երգերի ու ցնծագին բացականչությունների ուղեկցությամբ դանդաղ մոտենում է կառամատուցյին: Ժամանողներին դիմավորում են Սովետական Հայաստանի կառավարության, պարտիական, հասարակական կազմակերպությունների ու մամուլի ներկայացուցիչները, ինչպես նաև Զուլֆա քաղաքի ու երկաթուղային կայարանի աշխատավորները:

Հուլիսի 19-ին իրանահայերի առաջին խումբը Զուլֆայից ժամանում է Արտաշատ. կայարանում նրանց դիմավորում են Արտաշատի շրջանի աշխատավորները, ինչպես

նաև ՀՍՍՌ Հողագործության մինիստր Ս. Ղազարյանը, Տեխնիկական կուլտուրաների մինիստր Ե. Ղազարյանը, ԶԿ(բ)Պ Արտաշատի շրջկոմի քարտուղար Զ. Մարտիրոսյանը, Արտաշատի շրջսովետի գործկոմի նախագահ Թ. Սարգսյանը, մամուլի ներկայացուցիչները և այլ ղեկավար աշխատողներ:

Գնացքը մոտենում է տոնական տեսք ընդունած կառամատուցյին. բարեգալուտի ցնծագին ողջույնների ուղեկցությամբ ամենից առաջ գնացքից իջնում են Մատուլյան վեց եղբայրները՝ իրենց ընտանիքի երեսուն և չորս անդամների հետ միասին: Ամենամեծ եղբայրը՝ 75 տարեկան Արամը Հայաստանի հողի վրա ոտք դնելուց բացականչում է.

—Մեր պապերը մեռան Հայրենիքին կարոտ, մենք նույնպես կարոտ էինք հայրենիքին, իրականացավ մեր երազը, այժմ մենք գտնվում ենք մեր ազատ Հայաստանի մեջ: Թող երկար պարի մեր մեծ Ստալինը:

Արամի ու նրա համագյուղացիների 80 ընտանիքները տեղավորվում են պատմական Արտաշատում, որտեղ նրանց համար ստեղծված են ուրախ ու երջանիկ կյանքի բոլոր պայմանները:



### ՆԵՐԳԱՆՔՈՂՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ՔԱՐԱՎԱՆԻ ԺԱՍԱՆՈՒՄԸ

Հուլիսի 17-ին Բելյուսթից Բաթումի ժամանեց բոլոր հարմարություններով օժտված սովետական մարդատար «Ռոսսիա» խոշոր դիզելէլեկտրանավը՝ Հայրենիք փոխադրելով 2243 վերաբնակի, որոնցից երկուսը՝ Բելյուսթ-Բաթումի ճանապարհին ծնված։ Նորածիններից մեկի մայրը՝ Սիրանուշ Թելֆեյանն իր դստեր ի պատիվ սովետական նավի կոչել էր Ռոսսիա, իսկ երկրորդի մայր Փոստեղանը իր տղային նավապետի անունով կոչել էր Իվան։

Նավի բացառիկ զեղեցկությունն էլ ավելի համակի էր հայրենադարձներին ուրախ տրամադրությամբ. ցնծություն է տիրում տախտակամածի վրա. երկու պատանիներ իրենց ձեռքերում վեր պարզած պահում են մի կտավ, որի վրա գրված է. «Շնորհակալություն հզոր Սովետական կառավարությանը։ Կեցցե Լենինի-Ստալինի պարտիան»։ Նավի առաջամասում փակցված է մի այլ լողունգ. «Շնորհակալություն հաղթական Կարմիր Բանակին և եղբայրական սովետական ռեսպուբլիկաներին»։

Նավահանգստում ժամանողներին դիմավորում են «Արտասահմանյան հայերի» ընդունող և տեղավորող կոմիտեի նախագահի տեղակալ Մարջանյանը, ՀՍՍՌ Ներքին Գործերի մինիստրի տեղակալ Ակոպովը, մամուլի նեկալացուցիչները։

Նվազածություն, ծափերի, օվաջիանների ներքո սկսվում է հայրենադարձների ափհանումը. նրանք հուզված են, նրանց իշխր կատարվել է։ Սովետական հողի վրա ոտք դնելուց առաջին հերթին նրանք իրենց պարտքն են համարում երախտագիտական հեռագիր հղել հայ ժողովրդի մեծագույն բարեկամ Ստալինին։

22Գ-ի թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ «Ռոսսիա» նավի կապիտան Իվան Վասիլևիչ Տրեսկինը հետևյալն է հաղորդում.

— Մեր նավի անձնակազմը մեկնել է Լենինգրադից 1945 թվի դեկտեմբերի 8-ին, Հեռավոր նավարկությունից հետո մենք վերադարձանք հայրենիք։ Գալիս ենք Նյու-Յորքից, որտեղից վերցրել ենք 4.500 տոնն բևե և ուղևորներ։ Ճանապարհին մենք մրտանք Բելյուսթ և նավի վրա վերցրինք արտասահմանյան հայերին։ Դժվար է հաղորդել այն խանդավառությունը, որով համակված են սովետական հայրենիք եկող արտասահմանյան հայերը։ Բելյուսթում հազարավոր հայեր մեզ ճանապարհ էին դնում։ Մենք դուրս եկանք Բելյուսթից հուլիսի 12-ին և

բարեհաջող կերպով հասանք Բաթումի, ուր մեր նավը ժամանում է առաջին անգամ։ Բաթումիից մենք մեկնելու ենք Օդեսա, որտեղ մենք կրեոնաթափվենք և ապա մի քանի ուղևորություն կկատարենք Բելյուսթից Բաթումի ու կրեոնեք արտասահմանյան հայերի նոր խմբեր։

Ես ուրախ եմ, որ ինձ վիճակվել է Սովետական Միություն բերել արտասահմանյան հայերի մի մեծ խումբ։ Սովազնացություն օրերին նավի անձնակազմի ու վերաբնակիների միջև հաստատվել էին բարեկամություն և սրտագին հարաբերություններ։



Հուլիսի 22-ին Երևան ժամանեց ներգաղթողների երրորդ խումբը։

Կայարանում դիմավորողների ծով բազմություն կար. Կայարանի շուրջը հազարավոր ավտոմեքենաներ էին սպասում։ Գնացքը կայարան է մտնում ծափողուլյանների տարափի տակ. շոգեքարշի վրա դրված է ժողովրդների սիրելի առաջնորդ Ստալինի մեծագիր նկարը. նրա երկու կողմը ծածուկում են ալ-կարմիր դրոշները։

— Կեցցե հայ ժողովրդի ազատարար Ստալինը։

— Կեցցե Սովետական Հայրենիքը, — բացականչում են արտասահմանից նոր ժամանած մեր հարազատներն ի պատասխան դիմավորողների բարեգալուստի ողջույնների։ Վագոնների կտուրների վրա երիտասարդները նվազում են, երգում, ծափահարում ու պարում։ Գնացքից իջնողները մրտերմական ու աշխույժ զրույց են սկսում նախորդ քարավանով ժամանածների հետ։ Ահա առաջին քարավանով ժամանած բժիշկ Ա. Տեր-Ղուկասյանը գտել է իր բարեկամ դերձակ Անդրանիկ Ալեքսանյանի ընտանիքը ու պատմում է նրանց Սովետական Հայաստանի մայրաքաղաքում ապրած իր քսան օրվա կյանքի մասին.

— Այստեղ լուսավորություն կա, կուլտուրա կա, — ասում է նա իր հարազատներին, — այստեղ շատ ու շատ աշխատանք կա։

Դիմելով Ա. Ալեքսանյանի մորը՝ բժիշկն ավելացնում է.

— Քեզ համար էլ գործ կա այստեղ, տրդայիդ համար էլ, աղջիկներիդ համար էլ։ Իսկ այս արևը, — ձեռքը վեր բարձրացնելով շարունակում է նա, — այս արևը արդեն Հայաստանի Արևն է, օտար արև չէ։

Լարված աշխատանք է կատարվում արտասահմանից վերադարձող հայերի ընդուն-



ման և տեղավորման հանձնաժողովում: Այստեղ է որոշվում, թե ում որտեղ, որ բնակարանում տեղավորել: Սկսվում է բաշխումը. Բերիայի ուսյունի ներկայացուցիչը խնդրում է, որպեսզի թույլ տան Միհրան Կարբուրյանի ընտանիքը իրենց ուսյունը

փոխադրելու. նույնը խնդրում են նաև Կիրովյան, Սպանդարյան և մյուս ուսյունների ներկայացուցիչները:  
Բաշխումն ավարտվում է. զարդարված ավտոմեքենաները սկսում են ժամանածներին փոխադրել նշանակված բնակարանները:

**ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՆԵՐԳԱՂԹՈՂՆԵՐԻ ՆՈՐԱՆՈՐ ԽՄԲԵՐԻ ԺԱՄԱՆՈՒՍԸ**

Հատուկ գնացքների ժամանումը Հայաստանի երկաթուղային կայարանները քանի գնում, ավելի հաճախակի է դառնում. ժամանում են նրանք թե հյուսիսից և թե հարավից՝ բերելով տասնյակ հազարավոր վերաբնակներին:

Լեռնացած կարոտը սրտներում՝ մեր հարազատ եղբայրները հայրենիք են ժամանում Լիբանանից, Սիրիայից, Իրանից, Բուլղարիայից:

Հուլիսի 22-ին Բաթումից վերաբնակներին մի մեծ խումբ հատուկ փնացքով ժամանում է Լենինական, ուր հանդիպում է գրկաբաց ընդունելության:

Նույն օրը հատուկ գնացքով Թավրիզից Արտաշատ է ժամանում իրանահայերի երկրորդ խումբը. ժամանողները ավտոմեքենաներով փոխադրվում են Արտաշատի շրջանի Դվին, Արտաշատ և մյուս գյուղերը: Կոլխոզնիկներն ու կոլխոզնիկուհիները սրտաբաց ընդունեցին Իրանից Մայր Հայաստան տեղափոխված սովետական նոր քաղաքացիներին և տեղավորեցին բարեկարգ տներում:

Հուլիսի 27-ին դարձյալ Լենինական է ժամանում բուլղարահայերի մի մեծ խումբ, մեծ մասամբ տեղափոխվածներ, ձուլողներ, կոշկակարներ և այլ պրոֆեսիայի տեղ մարդիկ. շրջապատված հոգատարությամբ նրանք հենց ընդունման կայանում իրենց մասնագիտության համապատասխան աշխատանքի ուղեգրեր են ստանում:

Հուլիսի 28-ին, գիշերվա ժամը 3-ին Երեվան է ժամանում բուլղարահայերի առաջին խումբը: Չնայած ուշ ժամին նրանց դիմավորելու համար կայարան էին եկել մայրաքաղաքի պարտիական ու սովետական կազմակերպությունների ներկայացուցիչներն ու աշխատավորները:

Ժամանողները Բուլղարիայի վառնա, Սելիստրա և Դովրիչ քաղաքների նախկին բնակիչներ են, մեծ մասամբ արհեստավորներ: Նոր սովետական քաղաքացիներն ըստ իրենց մասնագիտության աշխատանքի են տեղավորվում:

Հիացմունք են պատճառում արտասահմանյան մեր եղբայրների արտասովոր հայ-

րենասիրությունն ու բուռն հայրենասիրական զգացմունքները. և դա շատ բնական է. օտարութայան մեջ դեգերող մեր եղբայրների սրտերում տարիներով կուտակված, լինացած կարոտ կա հայրենիքի հանդեպ. ահա թե ինչու արտասահմանից ժամանող մեր բոլոր հարազատներն այրվում են անզուսպ մի ցանկությունով, ամեն կերպ օգտակար լինել Հայրենիքին, որքան կարելի է շուտ մասնակից լինել նրա նոր հնգամյա պլանի կենսագործմանը:

Ահա ինչ են գրում այդ մասին ժամանողները.

— Մենք՝ արտասահմանից առաջին քարավանով Հայրենիք վերադարձած հայերս, — գրում է բժիշկ Բերդ Մանուշակյանը, — արդեն Երևանում ենք գտնվում: Եվ մեր ուրախությունը չափ ու սահման չունի: Մեր ցանկությունն է՝ տարագրության մեջ գտնվող մեր բոլոր եղբայրները հասնեն այս երջանիկ օրվան՝ հավաքվեն մեր ազատ սովետական երկիրը և Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ, ուստի մեծ ժողովրդի գլխավորությամբ ձեռք ձեռքի տված, հայր Ստալինի առաջնորդությամբ, լծվեն մեր Հայրենիքի շինարարության գործին:

Հայրենական մեծ պատերազմը հաղթանակով ավարտելուց հետո, սովետական ժողովուրդը ձեռնամուխ է եղել ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման ստալինյան նոր հնգամյա պլանի իրագործմանը: Մեր ցանկությունն է՝ մեր բոլոր ուժերը նվիրել այդ վեհ գործին, ձգտել, որ նոր հնգամյա պլանը օր առաջ կատարվի:

Մեր՝ առաջին քարավանով Սովետական Հայաստան վերադարձած հայերի մեջ շնորհալի շինարարներ, լավ մետաղագործներ, փորձված մասնագետներ կան, որոնք Հայրենիք են եկել այդ նպատակի՝ իրենց ջանքերը կոմունիզմի կառուցմանը, մեր երկրի ծաղկմանն ու զարգացմանը նվիրելու համար:

Ես մասնագիտությամբ բժիշկ եմ: Ես լավ դիտեմ, որ մեր Սովետական Հայաստանի մեջ շատ լավ բժիշկներ կան. ես լսել եմ ժո-



ղովըդին ծառայելու ասպարեզում նրանց կատարած լավ գործերի մասին:

Հայրենիք վերադառնալով, իմ նպատակն է՝ իմ ուժերը միացնել Սովետական Հայաստանի առողջապահության ֆրոնտի աշխատողների ուժերին և պայքարել մեր ժողովրդի առողջապահության բարձրացման համար, դրանով իսկ նպաստել մեր երկրի առաջ ծառայած խնդիրների հաջող կենսագործմանը:

— Երկար տարիներ Հայրենիքին կարոտ լինելով, — գրում է Վարդգես Մանուկյանը. — այսօր, Սովետական Հայաստանի մայրաքաղաքը հասնելով, աշխարհում ամեն սերջանիկ մարդը կզգանք մեզ:

Սովետական Հայաստան գալով մեր փափազն է՝ մեր քրտինքը թափել սոցիալիստական աշխատանքին համար՝ հանուն մեր Հայրենիքի, հանուն մեր Սովետական Հայաստանի, որովհետև մեր փրկությունը միայն սովետական կարգերով բացվեցավ:

Մենք գիտենք, որ Հայրենիքի նոր հնգամյա պրանով մեր երկրի առաջ մեծ խնդիրներ են ծառայած և մենք Սովետական Հայաստան գալով, մեր ամբողջ ուժերը պիտի գործադրենք այդ խնդիրները հաջող վատարելու համար, մեր երկրի ծաղկման ու բարգավաճման համար:

Շնորհակալություն մեր հայր Ստալինին, որ մեզ համար հնարավորություն ստեղծեց պանդխտությունից վերադառնալու, մեր ուժերը մեր առատ Հայրենիքին, մեր ժողովրդին ծառայեցնելու համար:

— Ես եմ եւ իմ Սովետական Հայաստան այն ջերմ ցանկություններ, — գրում է Հակոբ Պետրյանը, — որ կարողանամ ծառայել իմ Հայրենիքի շինության համար, իմ քրտինքը մեր եղբայրների ու քույրերի քրտինքին խառնելու համար:

Ատիկա կատարվեցավ շնորհիվ հայր Ստալինի, շնորհիվ այն հոգատարության, որ սիրելի առաջնորդը ցույց կտա հայ ժողովրդին:

Մենք այսուհետ կաշխատենք մեր սովետական երկրին մեզ: Ինչպես մեր եղբայրներն ու քույրերը աշխատելու փորձով են արել մեզ համար, մեր Հայրենիքին համար, նույնը և մենք կանենք, որ մեր երկիրը է՛լ ավելի ծաղկի ու զարգանա: Ես շինության արհեստավոր եմ և դեռ տե՛մ, թե շինության աստուծո՞ւմ էն, մեծ գործ պետք է կատարվի մեր երկրում՝ ստալինյան նոր հնգամյա պլանով:

Ես իմ ամբողջ ուժերը կնվիրեմ այդ մեծ շինությանը ակտիվ մասնակցելու համար,

որովհետև այդ պլանին իրականացումը մեզի պիտի երջանկացնի:



Հայաստանի գրեթե բոլոր քաղաքներում, ավաններում, գյուղերում, սովխոզներում ու կոլխոզներում, ամենուրեք ու ամեն տեղ կարելի է հանդիպել երջանիկ վերաբնակների՝ շրջապատված հարազատների ջերմ հոգատարությամբ, սիրալիր ուշադրությամբ:

Ահա կիրանանից ժամանած մի խումբ վերաբնակներ տեղավորվել են Հոկտեմբերյանի շրջանի Միկոյանի անվան սովխոզում: Արարիայի ավազուտներում շարքաշ կյանք վարող, անշուք հյուղերի բնակիչներն այսօր ապրում են ընդարձակ, լուսավոր, նոր վերանորոգված, էլեկտրական լուսավորություն ունեցող բնակարաններում: Սովխոզի դիրեկտորի աստահույն է նույնը անհրաժեշտ կահ կառասիներով, նավթով, օճառով, սննդամթերքով. երեխաներին ամեն օր թարմ կաթ է տրվում:

Սակայն նրանց այդ բնակարանները ժամանակավոր են. ավանի ծարիրն սովխոզի դիրեկտորի լուրքաքննչուր ընտանիքի համար առանձին տներ է կառուցում՝ դեղձի, ծիրանի ծառերի մեջ թաղված. դրանց կառուցումն ավարտվելու մոտ է և շուտով լուրքաքննչուր ընտանիք ունենալու է իր սեփական տո՛նը՝ առօրե 2.000 քառակուսի մետր հողամասով, ծածկված մրգատու ծառերով:

Սովխոզի դիրեկտորի տոռոշի է նաև աշակցելի նորեկներին ոչխարներ, կովեր ձեռք բերելու. այսպեսով շանդած մեկ, երկու տարի, նրանք կունենան ոչ միայն սեփական տներ, այլև պարտեզներ, բանջարանոցներ ու կրթաններ:

Երբ սովխոզի ղեկավարությունը տնտեսությանը ծանոթացնելու համար բոլոր վերաբնակներին շրջապատության տարած, դիրեկտորը հասուն արտերի կողքին կանգնեցնելով նրանց ասաղ.

— Սիրելիներ՛ո, ճիշտ է, դուք ուշ եեաք, բայց այստեղի ձեռ եղբայրները ձեռ համար էլ ցանք կատարեցին, ահա այս հովից օրորվող արտը ձերն է, — ու մատով ցույց տվեց ոսնեգույն, յեցուն հասկերի այծուճի ծովը:

Այս, մինչև հոգու խորքերը հուսող, հոգատարությունը ցնցեց, այեկոճեց նրանց ներաշխարհը ու նրանք չգիտեին ինչպես արտահատել իրենց կրծքի տակ փոթորկող երախտաբխական զգացմունքները: Հուզմունքից կարկամել ու կանգնել էին լուռ արտի կողքին. նրանց հայացքներն անսահման երախտաբխություն էր արտահայտում:



լուսթյունը խզեց յոթանասունամյա Թորոս Խորոզյանը. նա գլխարկը հանելով ծունկ շոբեց արտի եզրին ու դեմքն Արագածին դարձրած ձեռքերը վեր պարզեց ու զգացված մրմնջաց.

— Փառք քեզ, Տեր, փառք, մեր մուրազը կատարվեց. ես միշտ վախենում էի մեռնել ու Հայաստանը շտեմնել, իսկ այժմ... այժմ էլ վախենում եմ մեռնել իմ պարտքը մեր հարազատ եղբայրներին չհատուցած: քո հողին ու ջրին մեռնեմ, քո հոգատար գավաղներին մեռնեմ, իմ անգի՛ն Հայաստան: Ապա ալեհեր գլուխը խոնարհելով սկսեց համբուրել, համբուրել ու անվերջ համբուրել հայրենի հողը:

Քոլորն էլ հուզված էին. բոլորի աչքերին էլ արցունքներ կային. և ինչպես չհուզվեին. կարող էին նրանք երազել անգամ այն ամենը, ինչ տեսնում են այսօր. հայրենիքի մաշող կարոտը սրտներում թափառել են նրանք երկար տարիներ, թափառել անկարեկից ու անհարազատ մարդկանցով շրջապատված, և ահա այսօր կանգնած են հայրենի հողի վրա, ծփոճ արտի կողքին, երջանկության ժպիտը դեմքներին, ուրախության արցունքն այտերին, գուրգուրանքով շրջապատված:

Ահա և մի խումբ իրանահայեր՝ Քերթ գյուղից, որոնք տեղավորվել են շորորոզ սովխոզում. նրանց հետ է նաև իրենց հոգեվոր հովիվը՝ տեր-նաշատուրը. մի թիկնեղ, սպիտակամորուս, վիթխարի հասակով, համակրելի զիմագծերով ցերմ հայրենասեր, որն իր հոտին Հայրենիք է առաջնորդել: Այստեղ Հայրենիքում տիրուհին մի զավակ ունեցավ, որին տեր-հայրն ի պատիվ Հայաստան ժամանելու կոչեց Հայաստան:

Ահա և իրանահայերի մի ուրիշ խումբ, որը բնակություն է հաստատել էջմիածնի շրջանի Միկոյանի անվան երրորդ սովխոզում: Նրանք շափազանց գոհ են իրենց համար ստեղծված լավագույն պայմաններից ու սրտացավ, հոգատար վերաբերմունք են ցուցաբերում դեպի դործը, աշխատելով մեծ խանդավառությամբ:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հաճությամբ ներգաղթողներ են տեղավորվել նաև Հուփսիմի, Ծողակաթի ու էջմիածնի վանքերի բնակելի սենյակներում:

Անհաշիվ է էջմիածինը տեսնել ցանկացողների թիվը: Հայաստանի քաղաքներում, շրջաններում տեղավորված բազմաթիվ վերաբնակներ ուխտի են գալիս էջմիածին: Նրանցից շատերը մոլեռանդ ուխտավորի հուրն աչքերում ծոնկ են շոքում վանքի դարպասների ծռաչ ու ծնկաշոք առաջ շարժվում մինչև վանքի ներսը: Միրիայից ժամանած մի ծերունի շոբեշոք վանքի դռներին հասնելուց հետո ձեռքերը վեր պարզեց ու սկսեց սրտի խորքից ջերմեռանդ աղոթքներ հղել:

— Փառք քեզ, Աստված, փառքդ շատ. իմ իղձը կատարված է, այժմ կարող եմ հանգիստ մեռնել. տարիներով մո՞մ եմ վառել, խո՞նկ ծխել, աղոթք արել, որ այս օրը տեսնեմ. և ես տեսա իմ ծաղկուն Հայրենիքը ու ես վստահ եմ իմ զավակների ապագայի համար. ես տեսնում եմ ահա և իմ սուրբ էջմիածինը:

Ուխտավորներից մեկը Վեհափառ Հայրապետի փեշերին էր փաթաթվել ու երկար ժամանակ չէին կարողանում նրան ոտքի կանգնեցնել. նա ուրախությունից հեկեկում էր երեխայի պես:

Վ.

